ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՓՅՈՒՌՔԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐ

MINISTRY OF DIASPORA OF
THE REPUBLIC OF ARMENIA

MINISTER

«14» 08 2018

..... / .....

**ԱՐՍԵՆ ՉԱՔԱՐՅԱՆԻ ՀԱՐԱԶԱՏՆԵՐԻՆ,
«ՖՐԱՆՍԱՀԱՅԵՐԻ ԱՌԱՋԱԴԻՄԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ» ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ԱՆԴԱՄՆԵՐԻՆ**

Խոր ափսոսանք ապրեցինք, երբ տեղեկացանք հայ ազգի նվիրյալ զավակ, ֆրանսահայ նախկին ռազմիկ, հասարակական գործիչ Արսեն Չաքարյանի վախճանի մասին:

Լինելով Միսակ Մանուշյանի պարտիզանական ջոկատի անդամներից վերջին ողջ մնացած հայը՝ իր մնացյալ կյանքի գործունեությունն անմնացորդ նվիրեց հայապահպանության, ֆրանսահայ համայնքի համախմբման, հայ-ֆրանսիական կապերի և բարեկամության զարգացման ու ամրապնդման, ինչպես նաև Ֆրանսիայի խորհրդարանի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման անչափ կարևոր գործին:

Արսեն Չաքարյանը ճանաչված ու հարգված էր ոչ միայն հայկական, այլև ֆրանսիական շրջանակներում և պատահական չէ, որ տարբեր տարիների ընթացքում արժանացել է Հայաստանի Հանրապետության պետական ու գերատեսչական պարգևների, ինչպես նաև պարգևատրվել Ֆրանսիայի Հանրապետության բարձրագույն՝ Պատվո լեգեոնի ասպետի շքանշանով:

Բարի ու հայրենասեր հայորդու կերպարը և թողած հետքը միշտ վառ կմնա նրան ճանաչողների շրջապատում:

Մեր խորին ցավակցությունն ենք հայտնում Արսեն Չաքարյանի հարազատներին, գործընկերներին, մտերիմներին և ողջ ֆրանսահայությանը:

ՄԽԻԹԱՐ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ՀՀ 0010, Երևան, Վ.Սարգսյան 3
3 Str. V. Sargsyan, Yerevan, 0010

tel.: (374 10) 58 56 01 (801)
fax.: (374 10) 58 91 57
E-mail: minister@mindiaspora.am